

Յ. Հ. ԳԱԼՈՅԱՆ

ԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՎԱՐՊԵՏՆԵՐԸ

638
9 - 21

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՄԵՏԱՔՍՏԵՎԱԾԻ

ՅԵՐԻՎԱՆ

1940

H APM.
3-4414a

Ե. Հ. ԳԱԼՈՎՅԱՆ

01 OCT 2010

638

9-2

ՃԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐԸ

Иhb. № 15975

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՄԵՏՍԱՔՍՏՐԵՍԻ

ЗԵՐԵՎԱՆ

1940



£2.905

13 MAR 2013

ՑԱՆԿ

1.	Նախաբան	3
2.	Եերամապահության ցուցադրումը Գյուղատնտեսական ծուցահանդեսում	6
3.	Ստախանովական բերքատովվության վարպետ Ումրինիսա Ումըրգակովա	6
4.	Քարձը բերքատվության, բաղմակրկնակի կերակրութիւնի վարպետ, վրացական ԽՍՀ Գերազույն Խորհրդի դեպուտատ, շերամապահ ընկ. Ալեքսանդրա Իոսիֆովնա Նուցուբիդզե	11
5.	«Նոր կյանք» կոլտնտեսությունը	14
6.	Եքանչանակիր շերամապահ Յելիզավետա Իվանովնա Դըմարչուկը և նրա բրիգադան	16
7.	Եերամապահության ցբանշանակիրները	19

b9

3

6

4142-82



Տեխ. Խմբ. Ա. ՈՀԱՆՑԱՆ
Սրբագրիչ Գ. ԶՐԱԴԱՑՊԱՆՑԱՆ

Դաւիթի վեպոր՝ Ա.-2305, պատվեր 144, տիրաժ 1500
Հանձնված և արտադրության 20 ապրիլի 1940 թ.
Պատճենահանձնության համար՝

Սորբագրված և տպագրելու 27 մայիսի 1940 թ.

Մանկ. Խոստիտուտի տպարան, Եթերվան, Մարքսի փ. № 17, 1940
ԲԱՅ ՌՍՀԽՎ - 509 / 5100 704 բ. 10-15-15

БИЗ ЦУНХУ a509 /5408 794 5-40 т. 1500/ 12

ՆԱԽԱԲԱԿ

«Եկամապահության անհրաժեշտ և
սպառվել հետագա մեծ աճ»:
(ՀԱՄԿ(բ)կ 18-րդ համագումարում
աված ընկեր ՄՈՒԾՏՈՎի գեկուցու-
մից):

1939 թ. Մուկվայում բացված Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսի այցելողները դիտելով շերամապահություն եկոպնաաները գալիս են այն յեզրակացությանը՝ վոր իրոք սոցիալիստական շերամապահությունը մեր մեջ, հայրենիքի արդյունաբերական և գյուղատնտեսական այլ ճյուղերի ու կուլտուրաների հետ զարգնված դժնվում և վերելքի շրջանում:

Շնորհիվ խորհրդային կառավարության, բոլշևիկյան կուսակցության և մեր կողանուեսությունների հոգատարության տարեցատարի աճում և շերպամապահության արտադրանքը Միայն Ստալինյան յերկու հնգամյակներում բաժանվել է մինչ հեղափոխական շրջանի համեմատությամբ աճել և 2,5 անգամ։ 1939 թվին Միության մեջ մթերված և 23730 հազար կիու բոժոք։

Վերջին 10 տարվա ժամանակաշրջանում մետաքսյա գործադրությունների արտադրանքն աճել է 6 անգամ: Միայն 1938 թ. մետաքսի արդյունաբերությունը տվեց մեր յերկրին մոտ 60 միլիոն մետր մետաքսի կառու:

Խորհրդային Խշանության տարիներին զգալի նվաճում՝ ներ ունի նաև Հայաստանի շերտապահությունը։ 1939 թվին մթերքած բաժնով 1922 թվի համեմատությամբ աճել է 7,3 անդամ, միջին բերքատվությունն աճել է 2,5 անգամ։

1939 թվին ՀԿ(թ)կ-ի Կենտրոնական Կոմիտեն և Հայկ ԽՍՀ ժողովությանը քննության առան Հայաստանի շերտամասնության գործացման խնդիրները: Մրագրված և Ստալինյան-հնգամյակի վերջում՝ 1942 թվին բուժութիւնական մթերումը հասցենել 200 տոննայի՝ այժմ մթերվող 130 տոննայի զիմաց, գրե-

Նայի իրացումը՝ 3750 տուփի, այժմ՝ իրացված՝ 2700 տուփի գիւմաց և միջին բերքատվությունը՝ մեկ տուփ գրենայից 59 կիլոգրամ։ Նախատեսնված է խոշոր չափով զարգացնել շերամապահության կերի բազան։ Հնգամյակի տարիներում տնկվելու յի մասսիվ թթվաստաններ՝ 1000 հեկտար տարածությամբ և բարձրաբռն թթենիներ՝ 2,800,000 հատ։ Կազմակերպվում է նաև 6 հատ կենարոնական կոլխոզային թթենու տնկարաններ, վորոնք մատակարարելու յին Հայաստանի բոլոր շրջաններին տնկանյութերով։

Հայաստանում շերամապահության արտադրանքն աճեցնելու նպատակով 1940 թվից սկսած նախատեսնված է շերամապահությունը տարածել մի շարք նոր լեռնային շրջաններում՝ Ախտա, Դուղքենդ, Մարտունի, Բասարգեչար, Դիլիջան, Աղին, Ստեփանավան, Կիրովական, Սիսյան, Այս միջոցառությունը Հայաստանի շերամապահության համար բաց են անում հարստա հեռանկարներ, գարձնելով այն գյուղատնտեսական հիմնական և յեկամտաբեր կուլտուրաներից մեկը։

Շերամապահության ֆըռնոտում աշխատող կուսակցական և անկուսակցական բոլշևիկները, զինված ՀԿ(Բ)Կ Կենտրոնական Կոմիտեի և Հայկ. ԽՍՀ Ժողկոմի խորհի վորոշությունով, 1940 թվի Գյուղատնտեսական ծուցահանդեսին նոր նվաճություն գիմասվորելու համար ծավալեցին խոշոր աշխատանք և 1939 թվի պլանների կատարման գործում ձեռք բերեցին խոշոր նվաճություն։

Բոժոժի մթերման տարեկան պլանը կատարվեց 102 տոկոսով, միջին բերքատվությունը՝ 56,7 կիլո, պլանով նախատեսներված 53,1 կիոյի զիմաց, վորոն ամենաբարձր բերքն և համարվում վոչ միայն Միության մեջ, այլև և կապիտալիստական շերամապահական առաջավոր յերկրների համեմատությամբ (իտալիա, Ճապոնիա):

Դրենայի արտադրության պլանը կատարված է 101,3 տոկոսով, իր վորակական բարձր ցուցանիշներով, այդ գծով մեծ նվաճություն է ձեռք բերել Մեղրու գրեն-գործարանը, վորը Միության մեջ արժանացել է ամենաառաջավոր գրեն-գործարանի կոչմանը և Տեքստիլ Արդյունաբերության Ժողովադատության գողկոմատի կողմից ստացել է միութենական փոխանցիկ կարմիր Դրոշը։

Կոլտ անտեսություններում տնկված են 163 հեկտար թթենու պլանացիաներ (պլանի 112⁰/₀-ը), թթենու բարձրաբռն տնկությունների պլանը կատարված է 108,5 տոկոսով։

Մի շարք կոլտանտեսություններ և շերամապահ կոլտանտեսականներ ձեռք են բերել սեկուլարացին ցուցանիշներ։ 1940 թվի Գյուղատնտեսական ծուցահանդեսին մասնակցելու համար զիմություններ են ավել և Հայկ. ԽՍՀ Ժողկոմի խորհի կողմից արդեն հաստատվել են 153 թթենածություններ, այդ թվում կոլտանտեսություններ՝ 10, շրջմիտաքս՝ 1, զրեն գործարան՝ 1, կոլտանտեսական շերամապահներ՝ 118 հոգի, առաջավորներ՝ 23 հոգի։

Ստալինյան Յ-րդ հնգամյակում շերամապահության առաջ խոշոր ինդիքներ են դրված։ 1942 թվին յերկրին պետք և տալ 32 հազար տոննա բոժոժ (աճ 47⁰/₀)։

Այդ ինդիքի հաջող լուծման գործում խոշոր գեր ունի բոժոժի բերքատվության բարձրացումը, վարը հնարավոր և բարձր ագրոտեխնիկայի և ստալինովյան շերամապահների փորձի լայն մասսայացման պայմաններում։

Մեր նպատակն է այս փոքրիկ բրոցույրայով ծանոթացնել Շերամապահությամբ զբաղվող կոլտանտեսություններին, կոլտանտեսականներին և այդ գծով աշխատող կաղըերին—սոցիալիստական շերամապահության նվաճությունների և զիմավորապես նրա վարպետների հետ, վորոնք իրենց բարձր ցուցանիշներով արժանացել են Համամիութենական Գյուղատնտեսական ծուցահանդեսին։

Հույսով ենք, վոր այս բրոցույրան վորոշ չափով կոժանդակի Հայկ. ԽՍՀ շերամապահ կոլտանտեսականներին և շերամապահության ասպարիզում աշխատող կաղըերին, շերամապահության հետագա զարգացման և նրա բերքատվության բարձրացման գործում։

Ե. ԳԱԼՍՏՅԱՆ

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՑՈՒՑԱՀԱՆԴԻՆ

1939 թվին Մոսկվայում բացված Գյուղատնտեսական Ցուցահանդինի լայնածավալ տարածության մեջ, թթենու կանչ ծառերով պատած հողամասում իր տեղն է զբաղվում շերամապահական պալիվիոնը: Շենքը բազկացած և յերկու մասից՝ առաջին մասում տեղափարված են Խաղողնատները, վորոնք ցույց են տալիս շերամապահության նվաճումները և նրա նշանակությունը մեր ժողովրդական տնտեսության համար: Իսկ յերկրորդ մասում ցուցադրված են շերամապահության առաջավորների ցուցանիշները:

Հայտնի յի վոր մինչև խորհրդայնացումը նախկին ցարական Ռուսաստանի ուներ միայն յերկու շերամապահական մարզեր՝ Միջին Ասիան և Անդրկովկասը, վորոնք արտադրում եյին չնչին քանուկությամբ մետած:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը հիմնվին փոխեց շերամապահության դեմքը, նա ստացավ բոլոր պայմաններն ու հնարավորություններն իր հետագա դարձացման և բարգավաճման համար:

Պավիլիոնի շերամապահական բաժնում կախված է խոշոր քարտեզ, իր վառվող գույնզգույն լապտերներով, վորը ցույց է տալիս, թե ինչպիս են բոլոր հողամասերը տարեց-տարի տարածում շերամապահությունը դեպի հյուսիս, ընդունելով նորանոր շըրջաններ՝ Ռէկրախնա, Ներքին Վալքա, Վարոնեծ և այլ շրջաններ, վարտեղ շերամապահությունը միայն խորհրդային իշխանության որոք և մուտք գործել:

Գեղեցիկ ու հրապուրիչ դիտուրամաներով ցույց է տրված, թե ինչ նշանակություն ունի շերամապահությունը մեր ժողովրդական անտեսության համար:

Ահա մետաքսե կտորների արտադրության գիագրաման՝
1927—1928 թ. թ. 9,6 միլիոն մետր, 1938 թ. 60 միլիոն

մետր: Մետաքսեղենը, վոր ցարական իշխանության որոք աշխատավորության համար «ճշխության» առարկա եր համարվում, այժմ նա գարձել է լայն գործածության առարկա, աշխատավորության սեփականությունը:

Խոշոր Պանոյի վրա ցույց է տրված մետաքսի գործածությունն արգյունաբերության, բժշկության, ելեկտրականության մեջ, ուղղմական գործում և խորհրդային քաղաքացու կենցաղում:

Ծածանվում են պարաշուտները, վորոնք պատրաստվում են մետաքսից: Այստեղ են ելեկտրալացների մետաքսից պատրաստած ցանցերը: Խորհրդային բժշկի ձեռքին մետաքսը վերքեր կապելու համար անփոխարինելի գենք եւ ելեկտրոտեխնիկայում նա ծառայում է վորպես մեկուսացուցիչ (իզոլյատոր):

Այստեղ եւ գասավորված մետաքսից պատրաստած լայն սպառման առարկաներ՝ չուզկիներ, նասկիներ, փողկապիներ, շարքեր և զանազան զգեստներ:

Այցելողը մեծ հրճվանքով ու հայրենասիրության հպարտությամբ և գիտում այն դիտարամային, վորը ցույց է տալիս սոցիալիստական շերամապահության նվաճումները: Ահա մի քանի թվեր այդ առթիվ՝

ՏԱՐԻՆԵՐ	ԲՈՃՈՒԺԻ ԱԹԵՐՈՒՄԸ (ԹՈՂՆՆԱ)	ՄԵՋԻՆ ԲԿՐՅԸ ՄԱԿ ՄԱՆՔԻ ԳՐԱՄՆԱՐԵՆԱՅԻՑ (ԿԻՐՈՆԵՐՈՎ)
1914	9843	21,3
1938	23730	40,6

Պավիլիոնի յերկրորդ բաժնում տեղափորված են շերամապահության վարպետների և առաջավորների ցուցանիշները:

Շերամապահական պավիլիոնի հողամասում կենդանի եկլապոնատներով ցույց էն տրված թթենու կուլտուրական սորտերը, նրանց աճեցման ձևերը և լավագույն սորտերի տարածումը մեր կոլտնտեսություններում:

Հատուկ ստենդում ցուցադրված և շերամապահության կերի բաղայի՝ թթագործության զարգացումը:

Տեղեւ 1938 թվին Միության մեջ հաշվի յեն առնված 62 միլիոն թթենու ծառեր և 16 հազար հեկտար թփածե թթաստան, ապա Սոտալինյան Յ-րդ հնգամյակի վերջում նախատեսնը ված և հասցնել թթենու ծառերի քանակը 158 միլիոն հատիք թթաստանների տարածությունը 120 հազար հեկտարի:

ԽՍՀ Միության ժողկոմիորեկ նախագահ ընկեր ՄՈՂՑՈՎ կուսակցության 18-րդ համագումարում իր տված զեկուցման մեջ ասաց՝ «Ներամապահության անհրաժեշտ է ապահովել հետագա մեծ ան»: Նախատեսնված և 1942 թվին բոժոքի մթերումը Միության մեջ հասցնել 32,000 տոննայի և այդ բազայի վրա կառուցել մի շարք նոր գործարաններ:

Կառավարությունն ու կուսակցությունը շերամապահության զարգացման համար ստեղծել են բոլոր պայմանները:

Ներամապահության ֆրոնտում աշխատող կազմերի, կոլտնակությունների, շերամապահ ոտախանովականների խընդիրն և լիովին ոգաագործել այն ոժոնդակությունն ու հոգատարությունը, վորը ցույց, են տալիս կառավարությունը և կուսակցությունը շերամապահության նկատմամբ, աղահովել այդ թանկարժեք կուտանըլքյի հետագու աճը, տալ մեր յերկրին և խորհրդային քաղաքացիներին ել ավելի մետաքս:

Բացի միութենական պավիլիոնից, շերամապահությունն իր վարպետներով և առաջավորներով ցուցազրված և նաև բոլոր հանրապետական պավիլիոններում:

Այժմ անցնենք շերամապահության առաջավոր կոլտնակությունների, առանձին վարպետների և առաջավորների նկարագրմանը, թե ինչով և ինչպես են նրանք արժանացել «Համամիութենական Գյուղատնտեսական Ցուցահանդեսին»:

ԱՍԱԽԱՆՈՎԱԿԱՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՏ ՌԻՄԻՆԻՍԱ ՌԻՄԸՐՁԱԿՈՎԱ

(Ուղբեկատան)

Ուղբեկատանը մեր մեծ Միության հանրապետություններից մեկն եւ Նա հարուստ և բամբակով և մետաքսով, համարվում և Միության աեքստիլ արդյունաբերության հիմնական

բազան: ԽՍՀՄ-ի մեջ մթերվող բոժոքի 53 տոկոսը տալիս է Ռւզբեկատանը: Շերամապահությամբ զբարվում են 380,000, անտեսություն: Միայն 1937—1938 թ. թ. հանրապետության մեջ տնկվել են 7,509,000 թթենի և 268 հեկտար թփային թթաստան, 1938 թվին մթերվել են 12411 տոննա բոժոք, վորը 1913 թվի համեմատությամբ աճել է 2,8 անգամ, իսկ միջին բերքատվությունը նույն տարվա համեմատությամբ աճել է 2 անգամ (միջին բերքը 1938 թ. 45,4 կիլո):

Իրենց բարձր ցուցանիշներով ցուցահանգեցնին մասնակցելու յին արժանացել բազմաթիվ շերամապահ և ստախանովամականներ, վորոնց մեջ աչքի յեն ընկնում ընկ. ՌԻՄԸՐՁԱԿՈՎԱՆ, վորն աշխատում և կոկանդի շրջանի «ԿԱՐԼ-ՄԱՐՔԱՆ»-ի անվան կոլտնտեսությունում:

Նա շերամապահությամբ զբարվել և դեռ վորքը հասակից, ցարտկան իշխանության որոք: Այն ժամանակ ցածր եր շերամի կերպման տեխնիկան, չկար պետության կողմից շերամապահ ների ազբուզամարկում, շերամապահությունը կազմակերպված եր շահագործման հիմունքներով, շերամապահն ստանում եր չնչին բերք, վորի կեսից ավելին վճարում եր բայերին և զբենայի տոեվարով զբարվող չարչներին ու սպեկուլյանաներին:

Միայն շերամապահությամբ զբարվելու սերն ու տնտեսական զաման պայմաններն եյին, վոր ստիպում եյին Ռւզբեկակովին և նրա նման շատերին զբարվելու շերամապահությամբ:

Խորհրդային իշխանության որոք և վոր շերամապահը կառավարությունից ստանում և մեծ ոժանգակություն: Մաեղծված են բոլոր պայմանները շերամապահի համար:

Հնկ. Ռւմբը զարդ տարեց—տարի տիրապետելով շերամի կերպման տեխնիկային, մացնելով յուր մեթոդները, ձեռք և բերում խոշոր նվաճումներ: 1938 թ. նա 30 գրամ սերմից ստանում է 93 կիլո բոժոք՝ պլանով նախատեսնված 50 կիլոյի գիմաց: Այսուհետեւ Ռւմբը զարդ է գրադարձություն: Շուտով նա տիրապետում է կրկնակի կերպարումների տեխնիկային և 1938 թ. 20 գրամ սերմից ստանում է 50 կիլո բոժոք:

Ի՞նչպես և Ռւմբը զարդ է կազմակերպում գործը, վոր ստանում և բարձր բերք: Կերպարումները նա սկսում և

վաղ կարևոսնը, քանի վորուչացրած կերակրութերը թարմ տերեւ վով չեն սնվում, շոգերը վրա յեն հասնում և անդրադառնում են վորդերի վրա, առաջ են դալիս հիմանդրություններ, բերքն ստացվում և քիչ և անվորակ:

Ռւմըրդակովը շերամի բոլոր հասակներում պաշտպանում է նորմալ պայմաններ. ահա թե ինչ և ասում ինքը՝

«Ես յեկա այն յեզրահացության, վոր բոժոքի բարձր բերքատվության և վորակի համար վորդերի բոլոր հասակների խնամքը ունի միահավասար նշանակություն, դրա համար ել վորդերի ստանալու առաջին որից սկսած յես աշխատում եմ ստեղծել նրանց զարգացման համար նորմալ պայմաններ»:

Ռւմըրդակովը վորդերն 1-ին, 2-րդ հասակներում պահում ե կողունակների վրա, վորդերը դասավորում նոսր, իսկ 3-րդ հասակից սկսած պահում ե մեկ հարկանի հասաժերկաների վրա: Առաջին հասակում մեկ տուփ շերամին արամադրում ե 2 քառ. մետր տարածություն, 2-րդ հասակում՝ 4 քառ. մետր, 3-րդ հասակում՝ 10 քառ. մետր տարածություն, 4-րդ հասակում՝ 25 ք. մետր, 5-րդ հասակում՝ 50 քառ. մետր:

Կերը տալիս ե հաճախակի այն հաշվով, վոր վորդերը միշտ թարմ տերեւ ուտենա: Քնի (մաշկափոխում) ժամանակ նա չի դադարեցնում կերը մինչեվ վոր բոլոր վորդերը չեն քնում:

Ռւմըրդակովը հատուկ ուշադրություն է դարձնում տերեւի վորակի վրա, մանր վորդերին միշտ կերակրում ե մատղաշ, թարմ տերեւի վրա, իսկ 4-րդ հասակից սկսած կերակրում ե ամբողջական ճյուղերով:

Շերամատանն Ռւմըրդակովը պահում է վառարան և ցուրտ որերին ու ժամերին տաքացնում ե, շենքն ողափոխում է պատուհանները և գնները բաց անկուվ որական մի քանի անգամ, իսկ յեթե գրառում լավ յեղանակ ե լինում նա առաջին հասակներում ողափոխության համար վորդերն որական 2-3 անգամ հանում է գուրբ:

Խշտիները փոխում ե յուրաքանչյաւր հասակում 2 անգամից վոչ պահաս և մեկ անգամ ել քնից արթնանալուց ահմիջապես հետո: Խշտիները փոխում ե նույնպես բոժոք հյուսելու նախորշակին (յերեք որ առաջ):

Ուսեղոր ու կուլտուրական ե լինել. Ռւմըրդակովի կյանքը:

Նա վոչ միայն լավ շերամապահ ե, այլ և որինակելի կոլտնտեսական. 1938 թվին ունեցել ե 325 աշխոր, բազմիցս անգամ պարզեցվածքների և միութենական և հանրապետական մարմինների կողմից: 1937 թվին ընկ. Ռւմըրդակովի միջնորդությամբ և դիմումով միութենական ժողկոմխորհը մեկ հատ բեռնատար ավտոմեքենա յի առանձնացրել կոլտնտեսությանը:

Ռւմըրդակովը 1938 թ. բոժոքի բերքի դիմաց ստացել է 2227 ուռւլի գրամ և 400 ս. մետաքսեղեն:

Տեղական խորհուրդների ընտրություններում ընկ. Ռւմըրդակովին ընտրվել է Կոկանդի շրջանի գործադիր կոմիտեի անդամ, ակտիվ մասնակցում և հասարակական աշխատանքներին և իր աշխատանքի փորձը տարածում ե շերամապահների մեջ:

ԲԱՐՁՐ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ, ԲԱԶՄԱԿՐՎԿԱԿԻ ԿԵՐԱԿՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՊԵՏ ՎՐԱՅԱԿԱՆ ԽՍՀ Հ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՃՈՒՐԴԻ ԴԵՊՈՒՏԱՏ, ՇԵՐԱՄԱՊԱՀ ԸՆԿ.

ԱԼԵՎՍԱՆԴՐԱ ԻՈՒՖՈՎՆԱ ՆՈՒՅՈՒԲԻԴԻԴՋԵ

(Վրացական ԽՍՀ Հ)

Վրացական ԽՍՀ Հ հանրապետությունը Միության մեջ համարվում ե շերամապահության հումութիւնի յերկորդ խոշոր բազան: Նա տարեկան մետաքսի արդյունաբերությանն ե տաւլիս Միության մեջ մթերվող բոժոքի 16 % ը:

Այժմ հանրապետության մեջ շերամապահությամբ զբաղվում են 147 հազար տնտեսություն:

Համամիութենական Գյուղատնտեսական Ծուցահանդեսին երենց բարձր ցուցանիշներով մասնակցում ենին 790 հոգի:

Ծուցահանդեսում աչքի ընկնող տեղ ելին գրավմաւ վրացական ԽՍՀ շերամապահության նվաճումները:

Յեթե 1913 թվին հանրապետությունում մթերված ե յեղել ընդամենը 1556 տոննա բոժոք, ապա 1938 թվին մթերված ե 3879,8 տոննա. միջին բերքատվությունը մեկ տուփից առել ե՝ 19 կիլոդր-1913 թ. մինչեւ 43,2 կիլո-1938 թ.

Վերջին տարիներում հանրապետությունում մեծ չափով տարածված են շերամի կրկնակի կերակրումները: Միայն

1938թ. կըկնակի կերակրումներից մթերված է 405 տոննա բոժոք:

Յուցահանդեսին մասնակցող շերամապահների մեջ իր բարձր ցուցանիշներով աչքի յե ընկնում ընկ. Ալեկսանդրա Խոսիֆովնա Նուցուբերգեն: Նա իր գործունեյությամբ մեծ հարգանք ունի Քութայիսի շրջանում յել ընտրված և վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդի գեպաւտատ:

Ընկ. Նուցուբերգեն 25 տարի յե, վոր զբաղվում է շերամապահությամբ, ցուցահանդեսին և ներկայացված վորպես բարձր բերքատվության և կըկնակի կերակրումների վարպետ, ստախանովական շերամապահ:

1938 թվին Նուցուբերգեն անց է կացնում 3 կերակրում (գարնան, ամռան յել աշնան) և պետությանն և հանձնում 341,2 կիլ բոժոք, վորի դիմաց ստանում է 11700 սուրլի դրամ: Բոժոքի բերքը մեկ տուփ գրենայից յեղել և գարնան կերակրումներից 79 կիլ (Ասկովի ցեղից), ամռան կերակրումներից 56,6 կիլ (Ասկովի+Բիլուտին) և աշնան կերակրումներից 75 կիլ (Բիլուտին+Ասկովի+Բիլուտին):

Խորհրդային Խվանության առաջին տարիներին շենք չունենալու պատճառով ընկ. Նուցուբերգեն չնշին քանակությամբ եր շերամ պահում՝ 1/2 առուփից վոչ ավել: Նա տեսնելով շերամապահության յեկամուաը և նրա նշանակությունը մեր հայրենիքի ժող. անտեսության համար, կառուցում է մեկ հատ հժանագին մեծ ծավալով շերամատուն: Շերամատան պատերը գործում են ճյուղերից և յերկու տակ սվաղում և, հատակը սվաղում է կավային հողով, իսկ առաստաղին խփում է յերկտակ ֆաներկա: Ընկ. Նուցուբերգենի շերամատունն ունի 2 խոտական սիստեմի վառարան, կահավորված են տամաթերկաներով, վորոնք ողատրաստված են ձողերից, իսկ վրան փուռմ են ճյուղերից պարապատած չաթեն: Այս ձեզով կահավորված շենքն ունի 256 ք. մետր կերակրման տարածություն, վորը հնարավորություն է տալիս միանվագ կերակրելու 3 տուփ շերամ:

Ընկ. Նուցուբերգեն խոշոր նշանակություն է տալիս կերակրման տարածությանը և ներքին պայմաններին:

Ազատ կերակրման տարածության և շերամատան նորմալ պայմանների առաջարկությունը յես համարում եմ բոժոքի բարձր բերք ստանալու եթևնական պայմանը ասում է ընկ. Նուցուբերգեն:

Նուցուբերգեն հատուկ ուշագրություն է դարձնում վորպերի առաջին հասակների վրա՝ պահում և կախված ետամաթերգությունից պահում և կախված են կերեկը և գիշերը, առաջին հասակից մինչեւ 5 հասակն որական 8 անգամ ցերեկը և 3 անգամ գիշերը, չեղակում ցերեկը 5 անգամ, գիշերը 3 անգամ: Ընկ. իսկ 5 հասակում ցերեկը 5 անգամ, գիշերը 3 անգամ: Ընկ. Նուցուբերգեն կերակրումներին մեծ նշանակություն է տալիս և գոտում է, վոր գիշերները տերեր շուրջ չի թուռմում, շերամատան ջերմությունը լինում է նորմալ այդ պատճառով շերքատությունը կերն ավելի լավ են ուսում քան ցերեկը: Ել վորպերը գիշերը կերն ավելի լավ են ուսում քան ցերեկը:

Բարձր բերք և վորակով բոժոք ստանալու համար ընկ. Նուցուբերգեն վորպերի առաջին հասակներում, նույնպես և քնից հետո մեծ բաժիններով կեր չի տալիս, վորպեսզի կերը չկուտակվի, շերամատանը խոնավություն չառաջանա, դրա համար ել Նուցուբերգեն վորպերին կերակրում է հաճախակի, բայց՝ մանր բաժիններով, իսկ յերբ վորպերը մեծանում են և մաշկափություններով, իսկ յերբ վորպերը մեծանում են, կերի նորման խության հատկանքներն անցնում են, հասցնելով նորմալ կերակրման: Խշտինեղինեան ավելացնում է, հասցնելով նորմալ կերակրում շները փոխում է յուրաքանչյուր հասակում յերկուտական անգամ շները հասակում 3 անգամ, իսկ անձրեվային որերին, յերբ ստիպեցրդ հասակում շները փոխում է անգամ վորպերին կերակրել քիչ թաց տերենով, այդ ված և լինում վորպերին կերակրել քիչ թաց տերենով, ստիպեցրդ ված և փոխում խշտիները: Վորպեսզի կերակրեպքում, նա ամեն որ և փոխում խշտիները: Վորպեսզի կերակրման շրջանում վորպերի կորուստ չտա Նուցուբերգեն մեծ կրման շրջանում վորպերին խանավանդ փոքր հասակում, խնամքով և փոխում խշտիները, մանավանդ փոքր հասակում, յերբ մանր վորպերը տերենի մեջ աննկատելիյեն լինում: Խշտիները փոխում կավալ չերմության համար, որական 3 անգամ ստուտան նորմալ ջերմության համար տերում, չի թողնում ջերմությունը 210 ծելսից ցած ինչնի:

Ամռան կերակրումների ժամանակը յերբ ջերմությունը բարձրանում է, նա շերամատանը կախում է թաց սավաններ, հատակին ջուր և ցանում, այսպիսով շերամատան ջերմությունը և չորությունը հասնում են նորմալ աստիճանի:

Ընկ. Նուցուբերգեն գալուվ կերի բազային նշանակությունը բոժոքի բարձր բերք ստանալու գործում, մեծ հոգաւարությունը բոժոքի բարձր բերք ստանալու գործում, մեծ հոգաւարությունը

և տանում թթագործության զարգացման վրա. իրա տնամերձ հողամասում նա տնկել է 300 հատ թթենու ծառ, ծառերի շուրջը, փորում և, ժամանակին ջրառմ, զոմաղը և տալիս, խնամքով և ետում ծառերը և ուցիոնալ ոգտագործում տերեվը:

Անա ընկ՝ նուցութիգեղեցի աշխատանքի մեթոդները, վորոնցով նա կարողանում է ստանալ բարձր բերքատվություն և իր որինակով բազմացնում է ստախանովական շերամապահների շարքերը:

«ՆՈՐ ԿՅԱՆՔ» ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

(Հայկական ԽՍՀ)

Հայկական ԽՍՀ հարուստ գեղարվեստական վոճով կառուցված ու կահավորված պավիլիոնում բավականին մեծ տեղ և տրված հանրապետության շերամապահությանը և նրա առաջաշարությանը ցուցադրմանը:

Հայստանի շերամապահությունը Միության շերամապահություն մեջ իր տեսակարար կշռով ցածր տեղ և գրավում, սակայն իր բը հեքատովությամբ նա միշտ բարիներ է, վոր առաջին տեղն և գրավում Միության մեջ:

Պավիլիոնի շերամապահական ստենդում ցուցադրված է Հայկ. ԽՍՀ շերամապահության նվաճումները՝ գրենայի տարածումը 1921 թվի համեմատությամբ՝ աճել է 2, 8 անգամ, բոժոժի մթերումը՝ 7,3 անգամ, միջին բերքատվությունը՝ 2,5 անգամ: Բնդամենը ցուցահանդես ելին ներկայացված 4 կոլտնտեսություններ և 36 շերամապահ կոլտնտեսականներ: Այսուղև և Դավանի շքանի «ԿԱԳԱՆՆՈՎԻՉ»—ի անվան կոլտնտեսությունը, վորը յերկու տարվա բոժոժի միջին բերքը մեկ տուփից հասցը է 66 կիլոյի, «ԿԻՐՈՎԻ»—ի անվան կոլտնտեսությունը՝ 72,2 կիլոյի. Բազդադ ցեղից և 70 կիլո չիբրիտ ցեղից, նույն կոլտնտեսությունների նախագահներ ընկ. Ա. Ն. Կարապետյանը, Զ. Ա. Մկրտչյանը, Ղափանի շքանի շքանի վարիչ ընկ. Բ. Տ. Ալեքսանյանը, վորի գեկագրությամբ շքանի յերկու տարվա միջին բերքը յեղել է 58 կիլո, Կոտայքի շքանի Քանաքեռի կոլտնտեսությունը և ուրիշները:

Միութենական շերամապահական պավիլիոնում լայն ցուցադրման և ներկայացված Մելրու շքանի «ՆՈՐ ԿՅԱՆՔ»

կոլտնտեսությունը, վորն իր ցուցանիշներով աչքի ընկնող տեղ և գրավում:

1932 թվին կոլտնտեսությունը մեկ տուփից ստանում է 58,5 կիլո բոժոջի բերք, 1937 թվին 72,2 կիլո, կերակրում է 175 տուփի և չնայած կիմայական անբարենպաստ պայմաններին, մեկ տուփից ստանում է 60, 8 կիլո, 1938 թ. շերամապահությունին կոլտնտեսությունն ստանում է 125934 սուրլի յեկամուտ, վորից 30 հազար սուրլի պարզեվատրում, իսկ 1939 թ. 166435 սուրլ:

Շերամապահությունը «ՆՈՐ ԿՅԱՆՔ» կոլտնտեսության հիմնական կուլտուրաներից մեկն է. նրա յեկամուտը կազմում է կոլտնտեսության ընդհանուրը յեկամուտի մոտ 20%՝ իսկ գրամական յեկամուտի 21,6%:

Շերամապահության վազդ կերի բազան կոլտնտեսությունում համայնացված է, ունի 18 հեկտար մասիվ թթաստան. բացի այդ բալոր խաղողի և պտղառու այղիների, առուների, խոտհարքների շուրջը տնկված են թթենիներ: Ամեն տարի կոլտնտեսությունը տնկում է մեծ քանակությամբ նոր թթենու տնկիներ:

«ՆՈՐ ԿՅԱՆՔ» կոլտնտեսության յուրաքանչյուր բրիգադավար և շերամապահ տիրապետում է շերամի կերակրման տեխնիկային: Նախ քան վարդերը շերամատուն տեղափոխելը բոլոր շերամատներն ախտահանում են ֆորմալինի 4% լուծույթով: Շերամատներում վասարաններ գնելն իր 1—2 շերմաչափով պարտադիր սպորտություն է, անհրաժեշտության գեպօտմ վորդերի առաջին հասակներում շերամատները տաքացնում են:

Շերամի կերակրումներն սկսվում են առավոտյան ժամը 5-ից մինչև գիշեցվա ժամը 12-ը: Մեծ չափով տարածված է նաև գիշերային կերակրումները: Վորդերին կեր են տալիս առաջին հասակներում 7—8 անգամ, իսկ 3—5 հասակներում որական 5—6 անգամ: Կոլտնտեսությունում վորդերը կերակրում են 2—3 հարկանի դարակների վրա, վորոնք պատրաստվում են ձողերից, կախում են առաստաղից, իսկ հատակների վրա փուռմ են յեղեղնից (դամիչ) գործած չաթանների: Դարակների վրա վորդերը պահում են նոսր այն հաշվով, վոր 5-րդ հասակում մեկ տուփ շերամին տրամադրվի 70—80 քառ. մետր կերակրման:

տարածություն և 120—150 լ. մետր ծավաբ։ Եկրամատներում վորդերի առաջին հասակներում պաշտպանվում է 24—25, առաջին շերմություն, վերջին հասակներում 21—22 աստիճան։ Կոլանտեսությունում բոժոժի բերքահավաքը սկսվում է կարճ ժամանակամիջոցում, վորդերի կյանքը տեղում է ընդամենը 30—35 որ, այդ բացատրվում է նրանով, վորդերը պահպատմեն շերմության և խոնավության նորմալ պայմաններում և կերպակրում են նորմալ։

Վորդերին կոլտնտեսությունը կերակրում է առաջին հասակներում կարված տերեվով, 3-րդ հասակում ամբողջական տերեվներով, իսկ 4-րդ, 5-րդ հասակներում ամբողջական ճյուղերով։ Հատուկ ուշադրություն է դարձվում կերի տերերի վորդերի վրա թուոմած, փոշոտ, թաց տերեվով վորդերին չեն կերակրում կերը տրված և ըստ կարիքի, յերբ տված տերեվը վորդերը լիվ յուրացնում են։ Վորդերի տակը-խցտիները միշտ մաքրում են, առաջին և յերկրորդ հասակներում՝ 2-ական անգամ, 3-րդ, 4-րդ հասակներում՝ 2—3 անգամ և 5-րդ հասակում՝ 1—2 անգամ։

Բոժոժաքաղը Մեղրու «ՆՈՐ ԿՅԱՆՔ» կոլտնտեսությունում վեր և ածվում մի ընդհանուր կենցաղային տոնի. կազմակերպում են հյուրասիրություններ, խնճույքներ, նվագածություն։

Կոլտնտեսության ցուցահանդեսին ներկայացված առաջավոր շերամապահներից բարձր ցուցանիշներով աչքի յեն ընկնում։ Ուսանյան Զարսւելին, Ազատյան Նուշիլը, 60 տարեկան Փեղյան Ոսկին, Շովյան Աղնիվը, վորոնցից յուրաքանչյուրն ամեն տարի տալիս և բոժոժի միջին բերք մեկ տուփից 80—90 կիլո։

Ցուցահանդեսային կամիտեն բարձր գնահատելով «ՆՈՐ ԿՅԱՆՔ» կոլտնտեսության շերամապահության նվաճումները պարզեցած և նրան 2-րդ կարգի դիվլոմավ, մեկ մուացիկլիտով և 5000 ռուբլի գրամական պարզեցածով։

ՇԲԱՆՇԱՆԱԿԻՐ ՇԵՐԱՄԱՊԱՀ ՅԵԼԻԶԱՎԵՏԱ ԻՎԱՆՈՎՆԱ ԴԱՄԱՐՁՈՒԿԸ ՅԵՎ ՆՐԱ ԲՐԻԳԱԴԱՆ

(Ուկրաինական ԽՍՀ)

Մեր յեղբայրական Ուկրաինան միայն Խորհրդային իշխանության որոք և սկսել զբաղվել շերամապահությամբ

(ընդամենը 7—8 տարի յե), Այժմ հանրապետությունում մթերշվում է ընդամենը 400—500 տոննա բոժոժ, սակայն նաև շերամապահություն զարգացման համար ունի հարուստ հնանկար։ Վերջին տարիներս կազմակերպված է խոշոր կերի բազա։ Տարեցարի աճում և բոժոժի միջին բերքատվությունը։ Մեկ տուփ գրենայից յեթե 1934 թվին միջին բերքը յեղի է 19, 6 կիլո, ապա 1938 թվին յեղի է 39,7 կիլո։

Եկրամապահության աշխատանքներն որինակելի ձեզով է կազմակերպված Միլիոնապոլի «ԶԱՐՅԱ» կոլտնտեսության շերամապահության բիրիգադիք, շքանշանակիր ընկ. Դըմարչուկի բիրիգադայում։ Այդ բրիգադան Դըմարչուկի գեկավարությամբ և նրա մեթոդների կերառմամբ տարեցատարի ավելացնում է բոժոժի միջին բերքատվությունը մեկ տուփի գրենայից

1935 թ. գարնան կերակրումներից ստանում է բերք 46,6 կիլո

1936 թ.—52,3 կիլո

1937 թ.—61,0 կիլո

1938 թ.—80,5 կիլո

Դըմարչուկի բրիգադան բարձր բերք և ստանում նաև շերամի կրկնակի կերակրումներից

1836 թ.—42,6 կիլո


1937 թ.—48,7 կիլո

1938 թ.—56,8 կիլո

Մինչեվ սերմը ստանալը Դըմարչուկի բրիգադան վերանորոգում, մաքրում և ախտահանում է բոլոր շերամապահը և կահավորումը։ Նախքան վորդերը շերամատուն փոխադրիլը շենքը տաքացնում է, հասցնելով շերմությունը մինչել 22⁰ Ցելսի—ի, քանի վորդերը մեծանում են նա ցածրացնում և շերամատան ջերմությունը 1—ին հասակում պահում և 22⁰-ում, 2—րդ հասակում՝ 21⁰, 3, 4-րդ հասակներում՝ 20⁰, 5-րդ հասակում՝ 19—20⁰։

Եկրամատանը խոնավություն չկռատակելու և ողախության համար յերկու ժամը մեկ անգամ շերամատան դաները 10—15 րոպեյով բաց և անում։ Եկրամատան կերակրում և ամրող որը (ցերեկը և գիշերը), յերեկը առաջին յերեք հասակներում յերեկու ժամը մեկ անգամ, իսկ վերջին հասակներում 3 ժամը մեկ անգամ։ Գիշերն առաջին հասակներում 5 անգամ, վերջին հասակներում 3 անգամ։

Եկրամապահ վարպետներ—



Հնկ. Դըմարչուկի հատուկ ուշադրություն և դարձնում տերեվի վրակի վրա, վորդի առաջին հասակներում տալիս և մատղաշ, թարմ և կարփած տերեվ. Յ-րդ հասակում կերակրում և ամբողջական տերեվներով, Գ-րդ հասակում մանր ճյուղերով, 5-րդ հասակում ամբողջական, ավելի մեծ ճյուղերով. Խշտիները փոխում և հաճախակի 1—2 հասակներում՝ 2-ական անգամ, 3—4 հասակներում՝ 3 անգամ, 5-րդ հասակում ամեն որ մինչև վորդերի հասունացումը (բոժոժ հյուսելու նախորյակը):

Դըմարչուկի բրիգադոն վարդերին կերակրում և 4 հարկանի դարակների վրա այն հաշվառ, վար 5 հասակում մեկ տուփի շերամին հատկացվի վոչ պակաս 60 ք. մ. կերակրման տարածություն:

Բոժոժի հյուսամանը բրիգադոն գիմավորում և նախապատշաճաված. զեր Յ-րդ հասակում պատրաստում և բոժոժավելներ, հաշված մեկ տուփին 400 հատ:

Վորդի կերակրումը Դըմարչուկի բրիգադայում տեղում և գարնան կերակրումների գեպքում 55 որ, ամսանը՝ 19 որ:

Բրիգադայի աշխատանքներին մեծ ոժանգակություն և ցույց տալիս նրա սոցամքումը ըրջոնի այլ շերամապահական կոլտնտեսությունների և բրիգադաների հետ:

Իր լավ աշխատանքի շնորհվել ընկ. Դըմարչուկի բրիգադան կոլտնտեսությունում շերամապահությունը դարձել և յեկամուտը կոլտնտեսություններից մեկը: Տարեց-տարի աճում և շերամապահության յեկամուտը՝ Յեթի 1935 թվին ստացված և յեկամուտ 12522 ոռբլի, ապա 1938 թ. այդ հասնում և 14320 ոռբլու, նույն տարում բրիգադան շերամապահության վրա ծախսում և 660 աշխարհ, հետեւապես մեկ աշխարհ դրամական արժեքը հասնում և 14ո. 92 կոպ.:

Դըմարչուկի բրիգադայի անդամները շերամի կերակրման կարճ ժամանակամիջոցում վաստակում են 70—80 աշխարհ, ապա անցնում են կոլտնտեսության այլ աշխատանքներին: Ինքը Դըմարչուկը 1938 թվին կոլտնտեսությունում ընդամենը վաստակում և 510 աշխարհ, բրիգադայի անդամներ 66 տարեկան պառավ կինը՝ Ա. Ա. Պանամարենկոն—320 աշխարհ, Պ. Մ. Չուչմանը—267 աշխարհ, Դ. Ֆ. Նիկալայչենկոն—332 աշխարհ:

Հնկ. Դըմարչուկի մեծ վորդին Կարմիր Բանակում և և մասնակցել և նասան լին կոիվներին:

Բացի կոլտնտեսությունում տարվող աշխատանքներից ընկ. Դըմարչուկն ակտիվ մասնակցում և նայել գյուղխորհուրդի աշխատանքներին, տեղական խօսությունների ընտրությունների ժամանակ ընտրական ոկրուզի նախագահի տեղակալ և յեղեւ իւ լավ աշխատանքի համար միջու պարզեվարվում և կոլտնտեսության և Գլան կարգադրի մարզային գրասենյակի կողմից:

Մեր կառավարությունը բարձր գնատելով ընկ. Դըմարչուկի շերամապահության գծով տարած աշխատանքը, նրան պարշեվատրել և «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ» մեղալով:

ՆԵՐԱՍՍՄԱՆ ՇԲԱՆԱԿԻՐՆԵՐԸ

Միութենական Գերագույն Խորհուրդի նախագահության հրամանակը վորով 1938 թ. պարզեվարվել է յին Ռւգեկիստանի և Ռւկուտինայի գյուղատնտեսության առաջարկությը զրանց հետ միասին շքանշաններ ստացան նաև մի խումբ շերամապահության առաջարկունների: Շքանշանակիրների թվին են պատկանում:

1. Ընկ. Սուլտանբակի Բարիխանը—Ռւգեկիստանի նամականի շքանշանակը կառավարիչ վորը 1936 թվից սկսած ծագվածում և խոշոր աշխատանք բոժոժի բերքատվության համար և ստանում և միջին բերք մեկ տուփից 1936թ.—53 կիլ 1937թ.—56 »

1938թ.—56,5 »

1939թ.—57 »

Հնկ. Սուլտանբայիկը պարզեվարված և ԱՇԽ. ԿԱՐՄԻՐ ԱՍՏՂԻ շքանշանով:

Ընկ. Ռասուլեկի Յուսուփը—Յերկար տարիներ ընկ. Ռասուլեկը վորպես շերամապահ տալիս և բոժոժի բարձր բերք՝ 1937 թ. գարնան կերակրումներից ստանում և միջին բերք 103,5 կիլո, իսկ յերկրորդից՝ 51 կիլո: 1938 թ.—105 կիլո, վորից 0,7 կիլո բուտի, իսկ մասնացածը բարձր վորակի բոժոժ: Հանձնած բոժոժի գիմաց ընկ. մասնացածը բարձր վորակի բոժոժ: Հանձնած բոժոջի գիմաց ընկ. մասնացածը բարձր վորակի բոժոջ: Հանձնած բոժոջի գիմաց ընկ. մասնացածը պարզեվարված և «Աշխատանքի գերազանցության» մեղալով:

3. Ընկ. Իրիներետովա Գուլբազար—Կարակալպակի շերամապահ. իր բարձր ցուցանիշների համար պարզեվարված և «Աշխատանքի գերազանցության» մեղալով:

4. Ընկ. Կուչումով Պավել Կոնստանտինովիչ—Ռւզենկիստանի Սամարկանդի զրենդրաբանի զիրեկտոր, պարգևված ըված և «Աշխատանքի զերազանցության» մեդալով:

Ընկ. Կուչումովը յերկար տարիներ աշխատելով զրեն գործարանում և գիտակցելով գրենայի արտադրության խոշոր նշանակությունը շերամապահության համար, աշխատանքի որինակելի կազմակերպվածությամբ Սամարկանդի գրենդրաբանը գործառում է որինակելի գործարան:

1938 թ. գործարանը պլանը կատարում է 110%՝ գրենայի ինքնաժերն իջցնում է 52 կ. տուփին, բոլոր աշխատանքները կազմակերպված են բրիգադաներով, գործարանում վերացված են կազմերի հոսունությունը, կան շատ կազմեր, փորոնք 10—15 տարի յի, վոր աշխատում են գործարանում: Կազմերին գործարանին ամրացնելու նպատակով միայն վերջին յերկու տարում ընկո. Կուչումովը կուտակենցաղային ներդրումների գծով ծախսում է 80,000 ռուբլի:

Գործարանում տառձեն քաշված մի շաբթ նոր յերիտասարդ կազմեր:

5. Զիկին Ստեփան Դրիգորովիչ—Ռւզենկիստանի Ֆերգանայի գրենդրաբանի նախկին զիրեկտոր, այժմ Ռւզենկովկարեստի կառավարչի տեղակալ, պարզեվատրված և «Աշխատանքի զերազանցության» մեդալով: Նրա զիկավարութամբ Ֆերգանայի գործարանը դարձել է առաջավոր գրենդրաբաններից մեկը:

Շերամապահության առաջավորների պարզեվարումը Միության շքանշաններով և մեդալներով վկայում է այն մասին, թե վորքան մեծ հոգատարություն են տանում կուսակցությունն ու կառավարությունը շերամապահության ֆրոնտում աշխատող առաջավորների նկատմամբ:

Շերամի խոշոր կերակրումների վարդետ
Ընկ. Ոսովսկի Ա. Ի.

Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցող առաջավորների մեջ իր նվիրվածությամբ, աշխատանքի որինակելի կազմակերպվածությամբ և արտադրական բարձր ցուցանիշներով աջքի յի ընկնում կիրգիզական ԽՍՀ «ՅՐՈՒՆՉԵՑ»-ի անվան շերամապահության խորհութեան նախկին զիրեկտոր, այժմ Գյավուլկամիրոյի Որջոնիկիձելի մտրդային գրասենյուի կառավարիչ ընկ. Ոսովսկին:

Նա ուժի տարի աշխատել և ֆրանգելի անվան շերտամապահական խորհութեանում վարպետ զիրեկտոր և տեխնիկական դեկան գերավար: Այդ տարիներում ընկ, Ոսովսկին տիրապետում է խոշոր համայնական կերակրումների տեխնիկային: 1936 թվին նա ամբողջ վեգետացիայի ըրջանում անց է կացնում 8 կերակրում: Շերամի կյանքի աելուղությունը հասցնում է 24—28 որվա, յերկու անգամ կրճատում և մեկ տուփ շերամի համար գոյություն ունեցող նորմաները, հասցնելով այն 450—500 կիլոյի: Զգալի չափով կրճատում և նաև բանուժի ծախսումը, հասցնելով այն 18—23 բան. որվա: Այդ բոլորի հետ միասին ընկ. Ոսովսկին շերամի խոշոր կերակրումներից կարողանում է ստանալ բարձր բերքատվություն—մեկ տուփ գրենայից 55—60 կիլո բաժնութ (նայած ցեղին):

Խորանակությունում ձեռք բերած փորձը դրվում է ընկ. Ոսովսկուն շերամապահության մեջ տալ ավելի բարձր ցուցանիշներ:

1938 թվի աշնանն ընկ Ոսովսկին ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահ ընկեր ՄՈԼՈՏՈՎին և Գլավզոլիի պետին ուղղած նամակով սոց. պարտավորություն և վերցնում Միություն մեջ վարեկե ցածր բերքատվություն տվող ըրջանում մեկ տարվա մեջ բաժնութի բերքատվությունը մեկ տուփից հասցնել Բաղդադ ցեղի համար՝ 60 կիլոյի, Հիբրլետ ցեղերի համար 45—50 կիլոյի, յերկու անգամ կրճատել գոյություն ունեցող կերի ծախսման նորմաները և կերակրման աելուղությունը հասցնել 28—30 որվա:

Կառավարությունը և Գյավուլկլի բարձր գնահատելով ընկ. Ոսովսկու սոց. պարտավորությունները, նրան տեղափոխում են ՈՐՉՈՒՆԻԿԻՉԵՑի մարզը, վարտեղ և ընկ. Ոսովսկին լծվում և աշխատանքի, իր սոց. պարտավորությունները կատարելու համար:

1939 թ. Ոսովսկին ՈՐՉՈՒՆԻԿԻՉԵՑի մարզի Լեվակումի շըրջանի կողմանակություններում կազմակերպում է 132,4 տուփ շերամի համայնական կերակրումներ և ստանում և մեկ տուփից հետեւալ բերքատվությունը՝

ԿՈԼՏՆԵՑԵՍՈՒԹՅՈՒՆԻ	1938 թվին	1939 թվին	մեկ տարրւում
1. Անվակումի կոլտնտեսություն	35, 75	63, 5	77, 6
2. Վարոշի անվան - ա -	29, 74	57, 54	93, 0
3. «ԿՈՐՄԱՆԻ ԱՍՏ» - ա -	34, 56	51, 2	17, 5
4. «ՊՐՈԴԲԵՍ» - ա -	42, 80	63, 22	50, 2
5. «ՊՐԻԿՈՐՄԱՆԱՑԱԿ ՊՐԱՎԴԱ» - ի	42, 66	57, 46	34, 7
6. Սելմաշուրոյի կոլտնտեսութ.	53, 78	56, 52	16, 8
Ընդամենը ըստ շրջանների	39, 0	60, 2	54, 3

Այդ վեց կողմանահատթյուններսւմ բոժոժի հյուսումը սկզբան է վարդի բաշխման որից հաջված 27,5 որ հետո, իսկ բոժոժաքաղը՝ 40—42 որ հետո:

«ՊՐՈԳՐԵՍ» կոլտնտեսության Յարդ բրիգադայի կերի ծախսաման հաշվառումը ցույց է տալիս, վոր մեկ տուփ շերամի համար ծախսված է ընդամենը 490 կիլո տերեւ և միաժամանակ բրիգադայի շերամի կերակրությունից ստացվում է միջին քերք 65,16 կիլո. հետևապես մեկ կիլո բոժոժի վրա ծախսվում է 7,5 կիլո տերեւ:

Բնկ. Ասովսկին նույն կողանահոռթյուններում կազմակերպում և ամուսն կերակրություններ 85,2 տուփ շերամից: Կերակրությունները տեղում են 25 որ և սահացվում և միջին բերք մեկ տուփից 45,4 են:

Այսպիսով ընկ. Ասովսկին պիվ կատարում է իր վրա վերցած սող. աշոտավորությունները:

Այժմ համառոտակի կանգ ասնենք ընկ. Ոսովսկու շերպամի երակրման տեխնիկայի և մեթոդների մրաւ:

Ասածին հերթին ընկ. Ոստվակին մեծ նշանակություն է առլիս կերպի վորակինն Նա առում է, վոր վոչ միայն առանձին կերպումների (գարնան, ամռան և աշնան), այլ և վորդի յուրաքանչյուր հասակի համար անհրաժեշտ է կազմակերպել հասուել թթաց

տան այս հաշվով, վսր վորդերը միշտ սնվեն մատղաշ տերեւ ներով. Այդ նպատակի համար ընկ. Ոսովսկին խորտնտեսությունում կաղմակերպում և այսպես կոչված հատուկ ռեզուլտյուն ունեցող սլանտացիաներ:

Վորդի առաջին յերկու հասակների համար մատղաշ տերև
ստանալու նպատակով վաղ գարնանը մինչ ծառերի վեղետացիան
սկսելը (յերկու ամիս առաջ) պլանտացիայի ծառերի մեջ մասը
ետում է, թողնելով ծառն առանց ձյուղերի։ Ահա այդ նոր
ետած ծառերի վրա նոր բուսած տերենով կերակրում ե 1-ին և
2-րդ հասակի վորդերին, առանց տերևը կտրտելու (ամբողջական
տերևներով։)

Ընկ, Ոստվոկին գտնում ե, վոր վոչ մի նպատակ չունի
տերեի կտրառումն այն պատճառով, վոր կտրած տերելը վորդերը
լավ չեն յուրացնում, կտրած տերելը շուտ և թոռմում, շերա-
մատանն ավելորդ խոնավություն և առաջանում և ամենակարե-
վորն այն ե, վոր կերք շատ և փշանում:

Վորդերի Յ-ըդ հասակի առաջին որը (մաշկափոխությունից հետո) Ասովսկին վորդերին տալիս և նույն կերը, ինչ վոր 1-ին և 2-ըդ հասակներում, իսկ հետագա որերում ամուսն կերակրում ների ժամանակ հտած ծառերի մանր ճյուղերով։ 4-ըդ հասակի վորդերին կերակրում և նույն տերեկով, ինչ վոր Յ-ըդ հասակում, այնուհետև մինչև կերակրման վերջը ամուսնն ոգուագործած ծառերի վրա աճած ճյուղերով։

Այսպիսով ընկ. Ռուփսկին զարնանն ետած ծառերից հաջորդ տարվա զարնանը տերեւի չի ուստապործում:

Կերակրման հաջող ընթացքի համար ընկեր Ոստվակին մեծ ուշադրություն և գարձնում ջերմության նորմալ սեժիմի վրա առաջին և 2-րդ հաստկներում շերամը պահում և 24^ο Ց. և մաշ-կափոխության ժամանակ 25^ο Ց:

Յասակում — 23—24° Տ.

4—*pq* և 5—*pq* հասակներում—22—23. Ճ.

Այսուհետեւ Ոստվակին հատուկ ուշազրություն և զարձ-
նում շերամներին ժամանակին և անհրաժեշտ քանակությամբ
կեր տալու վրա ծերեկը կերակրում է 4 անգամ, գիշերը
3 անգամ:

Բարձր բերքատվության և վսրակալ բոժոժ ստանալու հիմնական պայմաններից մեկն ընկը Ասովսկին համարում է վորդերի խնամքը և խնամքի պայմանները 1-ին և 2-րդ հասակում։ Փռքը հասակներում յուրաքանչյուր կոլանտեսության կից ընկը Ասովսկին կազմակերպում և վորդերի կենտրոնացված կերպարում այսպիս կոչված «ինկուբացիոն շենք»-ում, իսկ 3-րդ հասակում վորդերը կենտրոնական շենքից տեղափոխում ե կոլանտեսության համայնական շենքերը, հաշվի առնելով յուրաքանչյուր շերտամատան կարողությունը։

Կորուսաններից խուսափելու և կերի ֆոնդը սացիոնալ ոգտագործելու համար Ասովսկին ինկուբացիոն պահանջում գործազրված այսուլը փոխարինում և յերկտակ թղթե սիոմնիկներով, վորդից մեկին քսում և տերե, վորդերը տերեկ հոտից առաջին սիոմնիկից անցնում են 2-րդ սիոմնիկի վրա, վերջինս կշռելուց հետո, վարդերով տեղափոխում և մեծ թղթե շրջանակի մեջ այն հաշվով, վոր 1-ին հասակում խօսիները չփոխել և հնարավոր լիվի նույն շրջանակում նոսրացնել վորդերը։

Ահա ընկը Ասովսկու աշխանութիւն այն հիմնական մեթոդները, վորոնցով նա կարողացավ կատարել կառավարությանը և Գլավչովկին տված իր խոստումը։

Բազմաթիվ են մեր յերկրում Ասովսկու, Դըմարչուկի, Ումըրդակովի, Նուցուրիդզեի նմանները, վորոնց գաստիարակել և մեր մայր կուսակցությունը, ժողովուրդների հանձարեկ Մեծ ՍՏԱԼԻՆԸ։

Նրանց աշխատանքի մեթոդները զգվար չե կիրառել մեր կոլանտեսություններում, նրանք մատչելի յեն շերտամապաների համար։

Հետեւինք շերտամապահության առաջավորների որինակին, վորով եւ ավելի կրաքարացնենք սոցիալիստական շերտամապահության արտադրանքը, կտանք մեր յերկրին և խորհրդային, քաղաքացիներին եւ ավելի մետաքս։

ՀՀ Ազգային գրադարան



NL0292177

Ц. 1940 թ.
Акт № 389
Вкладн. л.

21

22.905

Apr.

3-44142